ԵԴՈՒԱՐԴ ՄԱՐՏԻԿԵԱՆ

ԲԱՐԵԲԱՐ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ

Ամերիկահայ գաղութէն ներս իր բարեբարութիւններով համբաւուած Տիար Եդուարդ Մարտիկեան մին է այն հայերէն, որոնք բոլորովին նոր աշխարհի մը մէջ հասակ առած՝ իրենց բնածին ընդունակութիւններով կրցեր են տիրանալ նախանձելի դիրքերու և իրենց նիւթական թէ բարոյական բոլոր կարողութիւնները աքանչելի համեստութեամբ մը ի սպաս դրեր մեր ազգի բազմապիսի կարիքներուն։

Տիար Մարտիկեան, ծնած 25 Օգոստոս 1908-ին ի Կ. Պոլիս, կրտսեր որդին է եղած Ստեփան և Աղաւնի Մարտիկեաններու։ 1914-ի ամրան ընտանեօք կը փոխադրուին Ամերիկա և կը հաստատուին ի Թօլէտօ, Օհայօ նահանգին մէջ։

Եդուարդ իր նախակրթութիւնը կը ստանայ տեղւոյն Հանրային Դպրոցին մէջ և 1926-ին, երբ ընտանեօք կը փոխադրուին Տիթրոյթ, կ'աւարտէ Բարձրագոյն Վարժարանը և կը ստանայ վկայական։ Ուսումնատենչ պատանին կը հետեւի Ֆորտ ընկերութեան դասընթացքին և սորվելով արհեստը՝ կը ստանայ վկայագիր այդ նուրբ արհեստի ճիւղին մէջ։ Շնորհիւ իր ունեցած զոյգ վկայականներուն, կ'արձանագրուի նոյն ընկերութեան Automotive Engineering *մասնագիտական դասընթացքին և կը մշակէ Ինքնաշարժային Մեքենագիտութեան ճիւղը։ Միեւնոյն ատեն կը յաճախէ Ուէյն Համալսարանի գիշերային դասընթացքներուն, ապահովելու համար տիպոս մը Մեքենագիտական Ձափագիտութեան մէջ։*

1935-ին աւարտելով *Ինքնաշարժային Մեքենագիտութեան ճիւղը, իբրեւ մասնագէտ պաշտօնի կը կոչուի* Briggs Mfg. Co. *ի մօտ։*

1938-ին *կը կնքէ երջանիկ ամուսնութիւն մը շնորհալի ու մտացի Օրդ. Հէլէն Աղեքսանդրի հետ։ Կը բախտաւորուին մէկ աղջիկ և երկու մանչ զաւակներով — Մերիլին, Հայկ Եդուարդ և Բասլրթ։*

Մինչեւ 1944 *կ'ունենայ պաշտօնի բարձրացումներ։ Նոյն տարին կը հրաժարի ու կը հիմնէ* Engineering & Design Company *մը։ Իսկ տարի մը ետք կը գնէ* Northfield Tool & Die Company*ն։ Միեւնոյն տարին յիշեալ երկու ընկերութիւնները միացնելով կը հիմնէ Մարտիկեան Գործարանը՝ որուն նախագահութիւնը մինչեւ այսօր կը վարէ։*

1953-ին *կը գնէ* Buckeye Alimunum Co. *-ն ի Ուսթըր, Օհայօ, որ կ'արտադրէ առուին, մանաւանդ խոհանոցի վերաբերեալ պիտոյք։ Մար-*

digitised by A.R.A.R.@

տիկեան Գօրփօրէյշընի ամենավերջին ձեռնարկը կ'ըլլայ Mardicar կոչուած, երկու հոգինոց Golt Cart-ը որ կրնայ քչուիլ ելեքտրականութեամբ կամ պէնզինով։

Տիար Մարտիկեան կը վարէ նախագահութիւնը իր հիմնած Մարտիկեան Գօրփօրէյշընի, իսկ միւս երկու ընկերութեանց վարիչ անդամն է։ Ունի նաեւ բացառիկ պատիւը ըլլալու Վարիչներէն մին Ամերիկայի Chief Executives Forum կոչուած ընկերութեան։

Մանուկ հասակէն Ամերիկա դաղթած, հոն հասակ նետած, մասնագիտութեան տիրացած, ամենէն դժուար և ահաւոր մրցակցութեան ենթակայ գործի մը ասպարէզը նետուած՝ այս ձեռներէց, աշխատասէր, համակրելի և առատաձեռն Հայորդին՝ ազդեցութեամբը իր բարեպաշտ ծնողաց և իր ցեղին յատուկ կեանքի պայքարին մէջ անպարտելի ոգիով, կուրծք կոծ տալ ամէն տեսակ դժուարութեանց և ի վերջոյ յաջողութեան պսակը գլխուն՝ առաջին անդամ ըլլալով ի յայտ կու դայ 1943–ին իր այժմու ծանօթ եկեղեցասիրութեամբ և բարեսիրութեամբ։

Կ'անդամակցի իր հօրը սիրած Տիթրոյթի Ս. Յովհ. Մկրտիչ Հայց. Եկեղեցիին, Հայկական Բարեգործական Ընդհ. Միութեան, Հայ Առաքելական Ընկերակցութեան՝ որուն գլխաւոր նպատակը եղած է օժտել Մեծագոյն Տիթրոյթի Հայ գաղութը փառաւոր Մշակութային Տունով և Հայ Եկեղեցիով։

Կը ստանձնէ նախագահութիւնը Հայ Առաքելական Ընկերակցութեան, կ'ընտրուի Վարիչ Անդամ՝ Հ. Բ. Ը. Միութեան Ամերիկայի Կեդր. Յանձնաժողովի, Հարվըրտ Համալսարանի Հայագիտական Ընկերակցութեան և Ս. Ներսէս Հայ Աստուածաբանական Դպրոցին։

Եդուարդ Մարտիկեան կը դրաւէ աչքառու դիրք մը Ամերիկայի Հայ ներկայ սերունդին մէջ որպէս ինքնօգնութեամբ տնտեսական բացառիկ յաջողութիւն ձեռք ձգած և Աղգային Բարերար կոչուելու արժանի անձնաւորութիւն մը։ Անոր կեանքի փիլիսոփայութիւնը եղած է տալ անվախօրէն և հաւատալ որ Աստուած տուողը կը վարձատրէ բիւրապատիկով։

Վերջին քսան տարիներուն ընթացքին Տիար Մարտիկեան մօտ 500·000 տոլարի նուիրատուութիւններ ըրած է զուտ Հայկական ձեռնարկներու և հաստատութեանց։ Սոյն դումարը յատկացուած է գլխաւորաբար հետեւեալ նպատակներուն. Տիթրոյթի Հայց. Եկեղեցւոյ և Մշակութային Տան կառուցման, Հ. Բ. Ը. Միութեան այլեւայլ հանգանակութեանց և ձեռնարկներուն, Հարվըրտ Համալսարանի Հայագիտական Ամպիոնին, Էջմիածնի Տպարանի սարքաւորման, Վեհ. Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի ձեռամբ Երեւանի Եկեղեցիներէն մին նորոգման, Երուսաղէմի Վանքի Մատենադարանին և Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան ֆոնտին։

Ի գնահատութիւն իր առատաձեռն նուիրատուութեանց, Տիար Մարտիկեան արժանացած է Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի Օրհնութեան Կոնդակին և Ս. Լուսաւորչի Ա. Կարգի Շքանշանին։

Տիար Ե. Մարտիկեան, խանդավառուած Երուսաղէմի Հայոց Մայրավանքին մէջ սկսուած շինարարական շարժումէն, յանձն առաւ տրամադրել յիսուն հազար տոլարի իշխանական գումար մը, ծառանդաւորաց ձեմարանի հին շէնքը վերածելու համար մնայուն թանգարանի մը։

«Երանի որ ունիցի յիշատակ ի Սիոն»։

3827

digitised by A.R.A.R.@